



ՍԱՏԹԵՈՍ ՎԱՐՂԱՊԵՏԻՆ ՔԱՐՈԶԸ ՏԻՐՈՋ ԿՈՅՍԵՆ ՍՆՈՒՆԴԻՆ,
ԱՅՆ ԽՕՍՔԻՆ ՍԱՍԻՆ, ՈՐ Կ'ԸՍԷ. «ԲԱՆԸ ՍԱՐՄԻՆ ԵՂԱՒ»¹

Արդ, չորս աւետարանիչներէն պատուականագոյնն է Յովհաննէսը, ինչպէս ցոյց կու տայ Եզեկիէլի կառքին արծուաձեւ պատկերը, որովհետեւ բարձրագոյն տեղերուն մէջ յայտնի կ'ըլլայ անոր բարձրագոյն խօսքերը, ըսելով. «Սկիզբէն էր Բանը»²:

Արդ, եթէ քիչ մը բարձրերը ելած ըլլար այս Աւետարանիչը, կ'ըսենք, թէ մարդկային բոլոր բնութիւնները չէին կրնար տանիլ անոր խօսքը:

Արդ, արծիւը Յովհաննէսի խորհրդանիշն է եւ արծիւի բնութեան մասին իմաստասէրները ըսած են, թէ երբ ձագեր կը հանէ ու բոյն կը դնէ, պատուական քարերով կը շրջապատէ իր տունը՝ օձերու եւ մահուան երկիւղէն դրդուած. հոգեւորապէս ալ նոյնը պէտք է իմանանք արծիւին պատկերը՝ Յովհաննէսի պարագային, որ գեղազարդեց եւ շրջապատեց եկեղեցին՝ Աստուծոյ կենդանի տունը, եւ [իր խօսքերը] աւազանէն նոր ծնածները կ'ապրեցնեն [կը պաշտպանեն] օձաբարոյ մարդոցմէ՝ հեթանոսներէն, հրեաներէն եւ հերձուածողներէն, եւ այսպիսիները շատ են եւ իրարմէ տարբերուող:

Նախ՝ ոմանք օձաձեւ են. Փոտինոսի³ ըսածն ալ այդպէս է, թէ՛ անմարմին Բանը յաւիտեաններէն առաջ գոյութիւն չունէր, [այսինքն՝ սկիզբէն չէր], այլ՝ անմարմին Բանը եւ մարմինը՝ որ Կոյսէն է, միասնաբար գոյացան, գոյութիւն ունեցան: Այս պատճառով առաջին պատուական այս քարը կը դնէ, ըսելով, թէ՛ «սկիզբէն էր Բանը», եւ ոչ թէ ետքէն սկիզբ առած է:

¹ Յովհ. Ա. 1:

² Յովհ. Ա. 1:

³ [Փոտինոս Սրմիացի (Photinus of Sirmium), գործած է 4-րդ դարուն: Եղած է Սրմիումի (ներկայիս՝ Սրեմսկա Միտրովիցա, Սերպիա) եպիսկոպոսը: Արիոսականութեան մէջ մեղադրուած ու դատապարտուած է, որովհետեւ ուսուցանած է, թէ նաքիսան Իր մարմնացումը Քրիստոս գոյութիւն չէ ունեցած, եւ միայն Սուրբ Կոյս Մարիամէն ծնելէն ետք է, որ գոյացած է: Անոր ուսմունքը մերժուած է Սրմիումի 351 թուականի ժողովին՝ որպէս հակաքրիստոնէական եւ հակառակ՝ Նիկիական Հաւատքին]:

Երկրորդ՝ քանի որ ոմանք ըսին, թէ մէկ բնութիւն է եւ անձերն ալ մէկ են, այդ պատճառով կը դնէ երկրորդ խօսքը՝ ըսելով. «Բանը Աստուծոյ հետ էր»⁴:

Երրորդ՝ որովհետեւ ըսին, թէ ստեղծող չէ, այլ՝ ստեղծուած, բայց բոլոր ստեղծուածներէն ամենէն պատուականագոյնը. ասոր համար կ'ըսէ. «Եւ Բանը Աստուած էր»⁵:

Դարձեալ, չորրորդ՝ ըսին, թէ բոլոր աներեւոյթներն ու իմանալիները Աստուծոմէ ստեղծուեցան, իսկ երեւելիներն ու բոլոր զգալիները՝ սատանայէն, այդ պատճառով կը դնէ միւս պատուական քարը, որ հետեւեալն է. «Ամեն ինչ Անով եղաւ»⁶, այսինքն՝ երեւելիներն ու աներեւոյթները:

Հինգերորդ՝ ոմանք ըսին, թէ՝ «ամեն ինչ Անով եղաւ», յայտնի է, թէ չարը Անորմէ գոյութեան եկաւ. [Յովհաննէս] կ'աւելցնէ ըսելով. «Առանց Անոր ո՛չ մէկ բան եղաւ»⁷, որ յայտնապէս կը ցուցնէ մեղքն ու չարը, որ ոչինչ է եւ Մովսէսի ու Դիոնէսիոսի համաձայն էութիւն չունի, բայց բարին էութիւն է:

Վեցերորդ՝ ոմանք ալ ըսին, թէ անկարգ եւ անսահման ստեղծիչն ստեղծեց արարածները, այդ պատճառով միւս քարը կը դնէ, որ այսպէս է, թէ՝ «ամեն ինչ Անով եղաւ: Կեանքը Անով սկիզբ առաւ»⁸, եւ իւրաքանչիւր կենդանի կարգ եւ դասաւորութիւն ունի:

Եօթներորդ՝ ըսին, թէ Աստուած ամեն բան որ ստեղծեց, ստիպողաբար չի խնամեր, այլ՝ կողմնապահութեամբ: Արդ, անոնք որոնք ասիկա ըսին, կը ստեն, որովհետեւ եթէ այս զգալի աշխարհը ստիպողաբար կը խնամէ, ինչքան աւելի հապա իմանալի արեգակը՝ Աստուած. այդ պատճառով կ'ըսէ, թէ՝ «եւ կեանքը մարդոց համար լոյսն է»⁹:

Ութերորդ՝ քանի որ ըսին, թէ եւ Արարիչ Աստուած արարածները ստեղծեց, բայց ստուգապէս գութ չունի ասոնց վրայ, ինչպէս ըսին Յոբին բարեկամները, թէ՝ «Աստուած նստած է երկինքի բարձրութեան վրայ, կը հանգստանայ անոր վրայ եւ կարեկցանք չունի արարածներուն նկատմամբ»¹⁰: Ասոր համար այս խօսքը կը դնէ, թէ՝ «աշխարհի մէջ էր Անիկա»¹¹:

⁴ Յովհ. Ա. 2:

⁵ Յովհ. Ա. 1:

⁶ Յովհ. Ա. 3:

⁷ Յովհ. Ա. 3:

⁸ Յովհ. Ա. 3-4:

⁹ Յովհ. Ա. 4:

¹⁰ Հմմտ. Յոբ ԻԲ. 12-14:

¹¹ Յովհ. Ա. 10:

իններորդ՝ ըսին, թէ Բանն Աստուած թանձր մարմին չառաւ, որովհետեւ [մարմինը] ոսկոր եւ ջիլ է, այլ՝ անօսր է [Անոր մարմինը], եւ թանձրութիւնը Կոյսէն անցնելով, ինչպէս լոյսը արեգակէն, հայելիէն եւ կամ այլ այսպիսի բաներէ, այդ պատճառով կը դնէ այս ա կանը. «Բանը մարմին եղաւ [եւ մեր մէջ բնակեցաւ]»¹²:

Դարձեալ եւ տասներորդ՝ ոմանք կորստական օձեր, որ ըսին, թէ՝ «Բանը մարմին եղաւ», բայց թերեւս հոգի եւ միտք չունէր, այլ՝ Աստուածութիւնը կը ներգործէ հոգիին ու միտքին տեղ: Այս մէկը միւս աւետարանիչներն ալ յայտնապէս կը գոչեն, թէ Քրիստոս բանական հոգի ունէր, ինչպէս ցոյց կու տան, թէ՝ «Քրիստոս Իր գլուխը խոնարհեցուց եւ հոգին աւանդեց»¹³ եւ ո՛չ թէ Աստուածութիւնը:

Դարձեալ՝ ոմանք ըսին, թէ Բանը մասամբ միաւորեցաւ, այսինքն՝ անձով, իսկ բնութեամբ միաւորուած չէ, ատոր համար կ'ըսէ, թէ՝ «Բանը մարմին եղաւ»¹⁴, այսինքն՝ ամբողջը միացաւ եւ ո՛չ թէ մաս մը:

Դարձեալ՝ ոմանք ըսին, թէ Բանը շփոթեցաւ մարմինին մէջ, ատոր համար կ'ըսէ. «Մեր մէջ բնակեցաւ», այսինքն՝ առանց խառնուելու միացաւ, ո՛չ թէ պարզապէս կողք կողքի համադրուած, այլ՝ անճառելիօրէն միացած:

Արդ, այստեղ ոմանք կը տարակուսին՝ ըսելով, թէ ի՞նչ պատճառով Բանն Աստուած մարմին առաւ: Այս հարցումը կը բացատրենք սուրբ վարդապետներու խօսքերէն, թէ բազմաթիւ պատճառներով «Բանը մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ»:

Նախ եւ առաջ՝ քանի որ բնութիւնը, որ մեռած էր, Անով կենդանանայ: Երկրորդ՝ որովհետեւ բացի Քրիստոսէ ո՛չ ոք կրնայ [մարդկային] բնութիւնը փրկել ու ազատել. ո՛չ նահապետներէն, ո՛չ մարգարէներէն, ո՛չ Մովսէսը՝ օրէնքներով, ինչպէս կը ցուցնէ այն կինը՝ որու որդին մեռած էր, որ Եղիսէ Մարգարէին մօտ գնաց: Մարգարէն նախ Գեէզիին [իր ծառային] կը զրկէ իր գաւազանով, սակայն ան չի՛ կրնար կենդանացնել մանուկը. ապա Եղիսէն եկաւ եւ փոքրիկին վրայ պառկեցաւ եւ եօթն անգամ յօրանջեց փոքրիկին վրայ եւ եօթն անգամ ձայն տուաւ անոր, եւ ապա փոքրիկը արթնցաւ¹⁵: Արդ, մեռած փոքրիկը կը խորհրդանշէր Ադամին մեռած

¹² Յովհ. Ա. 14:

¹³ Յովհ. ԺԹ. 30:

¹⁴ Յովհ. Ա. 14:

¹⁵ Տէս Դ. Թագ. Դ. 8–38:

բնութիւնը, իսկ [Նղիսէին գաւազանը, որ] Գեէզիին [տուաւ] կը խորհրդանշէր Մովսէսը՝ օրէնքներով, իսկ Նղիսէն՝ գՔրիստոս: Փոքրիկին վրայ պառկելը կը խորհրդանշէր [Քրիստոսի] խոնարհումն ու մարդանալը: Իսկ եօթն անգամ յօրանջելը՝ եօթը մահացու մեղքերու արտաքսումը կը ցուցնէ, իսկ եօթը շնորհքներուն վար [երկիր] առաքումը եօթը անգամ ձայն տալը կը յայտնէ:

Երրորդ՝ թէ ինչո՞ւ Մովսէսի օրէնքները չկրցան փրկել [մարդկային] բնութիւնը: Ասոր պատասխանելով, կ'ըսենք, թէ երբ հիւանդին [հիւանդութիւնը] շատ կը սաստկանայ, առաւելաբար ան կարիք ունի իմաստուն բժիշկի, որովհետեւ եթէ հիւանդին ցաւը զօրաւոր է եւ բժիշկը՝ անկարող, չի կրնար հիւանդին ցաւը բուժել: Արդ, մեր բնութեան հիւանդութիւնը հոգեւոր էր, ծանր ու անբժշկելի, անհուն եւ անեզր, որովհետեւ Աստուծոյ դէմ էր: Օրինակ, եթէ մէկը թագաւորին դէմ մեղանշէ, առաւել չափով կը պատժուի, քան եթէ փոքրի մը դէմ մեղանշած ըլլայ. արդարեւ, Ադամ ո՛չ մեր դէմ եւ ո՛չ ալ հրեշտակներուն դէմ մեղք գործեց, այլ՝ Աստուծոյ դէմ, որ անհուն եւ անճառելի է, այդ պատճառով մարգարէներուն բոլոր հոյլերը չկրցան բժշկել, քանի որ անոնց իմաստութիւնը ճառելի էր եւ հուն ունէր: Իսկ Քրիստոս, որ Աստուած է եւ կատարեալ մարդ, անճառելի եւ անհուն իմաստութիւն ունի, այդ պատճառով կրցաւ բժշկել եւ «մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ»:

Չորրորդ պատճառ՝ երբ Քրիստոս մարմինով տակաւին աշխարհի մէջ շէր, մարմինով ամեն ինչ անկատար էր: Ասիկա վկայութեամբ եւ օրինակով ցոյց պիտի տանք՝ ինչպէս պատկերով եւ կերպարանքով, որովհետեւ պատկերները կ'ըլլան փոքրիկ, ուղղանկիւն, եռանկիւն, յոյժ եւ անօսը, բարակ եւ լայն: Նոյնպէս ձեւերը՝ ուղղանկիւն, եռանկիւն, քառանկիւն եւ կլոր ձեւ: Իսկ ինչ կ'ըսեն իմաստասիրողները. քանի որ կ'ըսեն, թէ կատարեալ ձեւը առաջինն է, որով կարելի է բան մը առաւել կամ նուազ ցոյց տալ, բացի կլոր ձեւէն: Նոյնպէս պատկերով կրնանք տեսնել, որովհետեւ եթէ երկայն պատկերը կլորցնես, ոտքն ու գլուխը իրարու փակած կ'երեւին, եւ ասիկա կը յայտնենք այսպէս. Աստուած առաջին օրը երկիւնքն ու երկիրը, լոյսն ու շորս տարրերը ստեղծեց: Երկրորդ օրը՝ հաստատութիւնը: Երրորդ օրը՝ ցամաքը, բոյսերը եւ տունկերը: Չորրորդ օրը՝ արեգակը, լուսինը եւ բոլոր աստղերը: Հինգերորդ օրը՝ ծովային ձուկերն ու օդային թռչունները: Վեցերորդ օրը՝ բոլոր գազանները, անասուններն ու մարդը: Եօթներորդ օրը՝ կինը՝ մարդուն կողէն, եւ հանգստացաւ: Արդ, այս պատճառով

ամենէն վերջը ստեղծեց, քանի որ կինը ոտք ու գլուխ էր, Աստուած Կոյս Մարիամին որովայնին մէջ իջնելով՝ կլոր ձեւ ստացաւ (մարմնացաւ), եւ երկինքը, երկիրն ու բոլոր արարածները լիացան:

Հինգերորդ պատճառ՝ որովհետեւ ստեղծուածները Աստուծոյ առջեւ չորս սեռեր են, եւ այս է. նախ՝ էութիւնը: Երկրորդ՝ շարժականը: Երրորդ՝ զգայականը: Չորրորդ՝ բանականը: Արդ, այս չորսը մարդուն մէջ կան, իսկ երբ Քրիստոս մարդացաւ, այս բոլորը իր մէջ եղան նաեւ, քանի որ եթէ Բանն Աստուածը հրեշտակի բնութիւն առած ըլլար, եւ կամ քարի, տունկերու, անասուններու, [ատոնք] կատարեալ չէին, այդ պատճառով մարդու բնութիւնը առաւ, որ արարածներուն մէջ վերջինն է, եւ ապա Արարիչին բոլոր արարածները լիացան, այս պատճառով Քրիստոս ըսաւ, թէ՛ «Քարոզեցէ՛ք Աւետարանը ամբողջ աշխարհին մէջ»¹⁶, այսինքն՝ միայն մարդոց, որովհետեւ մարդը ամբողջ աշխարհը իր մէջ պարունակած ունէր, եւ ըսաւ, թէ՛ քարոզեցէ՛ք տունկերուն, քարին ու անասուններուն, այդ պատճառով «Բանը մարմին եղաւ եւ մեռ մէջ բնակեցաւ»:

Վեցերորդ պատճառ՝ քանի որ [մարդուն] բնութիւնը խոնարհած ու ապականած էր, Բանը մարմնացաւ, որպէսզի բարձրացնէ զանոնք եւ անապական ընէ: Օրինակ, եթէ երկու գեղեցիկ պսակներ ըլլան, մէկը՝ ոսկի եւ միւրը՝ արծաթ, արդ՝ ոսկին արծաթէն պատուականագոյն է, սակայն կարելի է արծաթը ոսկիէն աւելի պատուական ընել, եթէ ունէ մէկը պատուական եւ գեղեցիկ քար մը դնէ անոր վրայ: Արդ՝ այսպէս, հրեշտակներուն բնութիւնը ոսկեղէն է, իսկ մարդունը՝ արծաթեղէն: Բանին մարմնանալէն առաջ մարդկութիւնը երկրպագութիւն կը մատուցէին հրեշտակներուն, ինչպէս ըրաւ Աբրահամը երեք մարդոց, իսկ երբ Բանը մարմին եղաւ, հրեշտակները երկրպագութիւն կը մատուցեն մարդոց, ինչպէս յայտնի է Յովհաննէսի տեսիլքին մէջ, երբ Յովհաննէսը կ'ուզէր հրեշտակին երկրպագել, Ամենակալ Տիրոջ հրեշտակը կ'ազդարարէր զինք¹⁷:

Տարակուսողներուն երկրորդ հարցումը, թէ նախ հրեշտակներն են Արարիչին կողմէ իբրեւ պատուական ստեղծուած, իսկ մարդը՝ ամենէն վերջը. անոնցմէ [հրեշտակներէն] շատեր երկինքէն ինկան, ինչո՞ւ հրեշտակներուն բնութիւնը չառաւ, այլ՝ մարդունը:

¹⁶ Մարկ. ԺԶ. 15:

¹⁷ Տես Յայտն. ԻԲ. 8:

Ասոր կը պատասխանենք վարդապետներուն խօսքերով, թէ բազմաթիւ պատճառներով:

Նախ՝ որովհետեւ հրեշտակներուն մէկ մասը ինկաւ եւ կորսուեցաւ, իսկ շատերը բարձունքներուն՝ իրենց փառքին մէջ մնացին, սակայն մարդկութեան սեռը ամբողջութեամբ կորսուեցաւ եւ ինկաւ: Արդ, եթէ Բանն Աստուած հրեշտակներուն բնութիւնը առնէր, ամբողջ մարդկութիւնը կը կորսուէր, ինչպէս մարդ մը որ երկու կիներ ունի, մէկ կնոջմէն տասը որդիներ կ'ունենայ, իսկ միւսէն՝ մէկ որդի: Արդ, եթէ տասը որդիներէն մէկը մեռնի, այդքան սուգ եւ կսկիծ չի՛ կրեր, ինչպէս միամօրին վրայ. այդ պատճառով, Բանն Աստուած մարդկային բնութիւնը առաւ եւ ո՛չ թէ հրեշտակներունը, ինչպէս կ'ըսէ Պօղոս. «...հրեշտակներուն ձեռք չտրկարեց, այլ՝ Աբրահամի սերունդին»¹⁸:

Երկրորդ պատճառ՝ քանի որ մարդկային բոլոր բնութիւնները մէկ մարդէ մը յառաջացան ու ծնան, եւ ո՛չ թէ հրեշտակներուն նման, այլ՝ առանձին բնական կերպով գոյացան Արարիչ Աստուծմէ: Արդ, այս պատճառով մարդ եղաւ, որովհետեւ մարդկային ցեղը մէկ հոգիէ ախտաւորուեցաւ, ինչպէս կ'ըսէ Պօղոս, թէ՛ «մէկու մը պատճառով բոլորս մեռանք»¹⁹, հետեւաբար մէկ մարդով էր, որ այս բոլորին կ'առողջացնէր ու կը կենդանացնէր: Եւ ասիկա Ինք՝ Քրիստոսն էր, իսկ հրեշտակները՝ շատ եւ բազմաթիւ էին, ուրեմն բազմաթիւ բժիշկներու պէտք ունէին:

Երրորդ՝ որովհետեւ հրեշտակներուն մեղքը կամաւորաբար էր եւ ոչ ոք պատճառ ունէին, իսկ մարդունը, ակամայ էր եւ առիթ ունէր՝ սատանան, քանի որ երբ Սաղայէլին սիրտը խոտորեցաւ, բոլորն ալ կամաւորաբար իրենց սիրտերը Աստուծմէ դարձուցին:

Չորրորդ՝ քանի որ մեղքը միայն Ադամեն էր՝ ներգործութեամբ, իսկ շատ մեղքերու պարագային՝ զօրութեամբ, բայց բազմաթիւ հրեշտակներու մօտ մեղքը ներգործութեամբ էր եւ ոչ զօրութեամբ, հետեւաբար պէտք չէր ամբողջ բնութիւնը կորսուէր, որովհետեւ զօրութեամբ մեղանչեցինք, այդ պատճառով «Բանը մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ»²⁰:

Հինգերորդ՝ քանի որ մեղքը Ադամի պարագային խաբէութեամբ եւ պատրանքով էր, իսկ հրեշտակներունը՝ ո՛չ, ինչպէս կ'ըսէ, թէ Եւան խաբուեցաւ

¹⁸ Եբր. Բ. 16:

¹⁹ Տէս Բ. 4որնթ. Ե. 14:

²⁰ Յովհ. Ա. 14:

բայց Ադամը ո՛չ, եւ ճշմարիտ է, որովհետեւ նախ Եւան առաւ օձին խօսքը, իսկ Ադամը՝ իր կնոջմէն, ուրկէ կ'երեւի, թէ կինը խաբուեցաւ, իսկ Ադամը պարտաւորուեցաւ, քանի որ Ադամ գիտցաւ, թէ Աստուած այդ խօսքը առակի նման խօսեցաւ, թէ՛ «այն օրը ու ուտէ, մեռնելով պիտի մեռնի»²¹, եւ տեսաւ Ադամ, որ կինը շմեռաւ: Եւ դարձեալ՝ Ադամ կերաւ կնոջ սիրոյն եւ ըսաւ, թէ Աստուած կը ներէ մեր յանցանքները:

Վեցերորդ՝ որովհետեւ հրեշտակներուն եւ մարդոց բանական բնութիւնները [բանականութիւնները] կը տարբերին, քանի որ հրեշտակները բանականութիւնն ու խոկումը պարզ եւ պայծառ ձեւով ունին, որով մէկ եւ նոյն կէտը կրնան կատարել գործը առանց խրատի կամ ուսուցումի, բայց մարդոց բանականութիւնը քիչ մը սեւութիւն ունի եւ ազօտ է խաւարով, ինչպէս առաւօտեան լոյսը կը ծագի, որովհետեւ մարդը նախ պէտք է խոկայ, ապա սորվի եւ ապա միայն գործը կատարէ, այդ պատճառով «Բանը մարմին եղաւ եւ մեռ մէջ բնակեցաւ»:

Եօթներորդ՝ անձնիշխան կամքին համար, քանի որ մարդուն անձնիշխանութիւնը ուրիշ ձեւ է եւ հրեշտակներունը՝ ուրիշ: Եւ արդ, իմաստասէրները այսպէս կ'ըսեն. երեք ձեւի է անձնիշխանութիւնը, մէկը՝ Աստուծոյ, երկրորդը՝ հրեշտակներուն, երրորդը՝ մարդուն: Արդ, Աստուծոյ անձնիշխանութիւնը անփոփոխելի է, գործէն առաջ եւ գործէն ետք, նոյնպէս հրեշտակներունն ալ անփոփոխելի է, քանի որ անոնց մօտ կարողութիւն կայ նախքան գործը ընտրութիւն կատարել լաւին կամ վատթարին, բարիին եւ չարին, որովհետեւ ընտրութենէն ետք անփոփոխելի կը մնան այն բանին մէջ, որ ընտրեցին, թէ բարին կամ թէ չարը, այդ պատճառով ալ հրեշտակներուն մեղքը աններելի է, քանի որ անզղջալի է, իսկ եթէ անզղջալի է, ապա խոստովանելի չէ, իսկ եթէ խոստովանելի չէ, ուրեմն հրեշտակներուն մեղքը աններելի է: Եւ արդ, որովհետեւ հրեշտակներուն անձնիշխան կամքը անփոփոխելի է, իսկ մարդունը՝ փոփոխելի, գործէն առաջ կամ գործէն ետք, այդ պատճառով մարդոց բոլոր մեղքերը ներելի են, ատոր համար Բանը մարմին եղաւ եւ հրեշտակի բնութիւն չառաւ:

Ութերորդ՝ որովհետեւ Եկեղեցւոյ վարդապետները կ'ըսեն, թէ հրեշտակները մեղանշելէ ետք այնպէս են, ինչպէս մարդիկը՝ մեռնելէն ետք. ասոր պատճառը այն է, թէ մարդիկ եւ հրեշտակները բարձրագոյն փառքով շատեղծուեցան, ինչպէս որ է Աստուած, քանի որ Աստուած միայն ունի

²¹ Մինդ. Բ. 17:

մեծ եւ բարձրագոյն փառքը, բայց երկուքին ալ՝ հրեշտակներուն եւ մարդոց, ճանապարհ տուաւ տարբեր ձեւերով հասնելու նոյն փառքին: Արդ, հրեշտակներուն ճանապարհ տուաւ կարճ ժամանակով եւ քիչ վայրկեաններով հասնելու Աստուծոյ փառքին: Իսկ մարդուն երկար ժամանակ եւ դանդաղ ընթացքով, մարմինի թանձրութեան եւ զգայական հոգիին համար, որովհետեւ հրեշտակները իմանալիներ եւ անմարմին ըլլալով՝ այդ պատճառով արագ կը հասնին Աստուծոյ փառքին, եւ այդ պատճառով է որ անոնք չեն կրնան մեղքի անկումէն ետ կանգնիլ, ատոր համար Բանը մարմին եղաւ եւ մարդու բնութիւն առաւ եւ ո՛չ թէ հրեշտակի:

Ինչերորդ՝ դարձեալ Պօղոս կ'ըսէ Յսայիի խօսքերէն առնելով, թէ՛ «Երկրի վրայ բան մը պիտի ընէ՛ հակիրճ եւ համառօտ»²². օրինակ, ինչպէս եթէ իմաստասէր մը անհուն եւ անբաւ իմաստութիւններու տէր ըլլալով իր իմաստութեան բոլոր խօսքերը համառօտէ փոքրիկ թուղթի մը վրայ, նոյնպէս Բանն Աստուածը համառօտեցաւ Կոյսին որվայնին մէջ եւ փոքրիկ թուղթի վրայ գրուեցաւ՝ մարմինի, որովհետեւ մեծ Աստուածը, բոլոր իմաստներուն Տէրը ըլլալով, Իր ամբողջ իմաստութեան խօսքերը լայն եւ ընդարձակ ըրաւ՝ Իր վարդապետութեան ուսումը Հին օրէնքին [ուխտին] մէջ, քանի որ իրենց միտքերը թանձր էին եւ բանականութիւնը՝ նուազ. ատոր համար Աստուծոյ տասը պատուիրանները եւ աւելին գրեց ու տուաւ անոնց՝ թանձրամիտ ըլլալուն պատճառով, ինչպէս կ'ըսէ Առաքեալը, թէ՛ «ոչ մննք եւ ոչ ալ մեր հայրերը կրցանք շալկել»²³, ատոր համար Աստուծոյ իմաստութիւնը օրէնքներու տասը պատգամները համառօտեց երկուքի մէջ, եւ երկուքն ալ՝ մէկի, եւ մէկ է Բանն Աստուածը, որ մարմին եղաւ, այսինքն՝ ճշմարիտ մարդ տնօրինականին (աստուածայինին) միաւորութեամբ, եւ մեր մէջ բնակեցաւ, որ է Ինք՝ Քրիստոս:

Տասներորդ՝ Յովհաննէս դարձեալ տեսիլքին մէջ կ'ըսէ, թէ՛ «տեսայ նաեւ զիրք մը՝ ներսէն եւ դուրսէն գրուած եւ եօթը կնիքով կնքուած»²⁴: Արդ, այդ գիրքը անցեալին Իսրայէլի տրուեցաւ, սակայն չկրցան հասկնալ ու կարդալ, ինչպէս կ'ըսէ Յսային, թէ՛ «գրագէտ մաքու մը տրուեցաւ, որպէսզի կարդայ, եւ կ'ըսէ, թէ՛ չեմ կրնար, եւ ըսաւ ինձի՝ ուրիշի մը տուր, եւ նարտար մաքու մը տրուեցաւ, եւ ըսաւ թէ՛ չեմ կրնար, որովհետեւ կնքուած է»²⁵: Արդ,

²² Տէս Հոռմ. Թ. 28:

²³ Գործք ԺԵ. 10:

²⁴ Յայտ. Ե. 1:

²⁵ Տէս Ես. ԻԹ. 11–12:

դուրսի գրութիւնը կը խորհրդանշէ Քրիստոսի գործերը, որ ըրաւ՝ ուտելը, խմելը, քարոզելը եւ այլն: Իսկ ներսէն՝ աստուածային անճառելի գործերը, որ կրնանք պատմել ու կարգալ, իսկ եօթը կնիքները կը խորհրդանշեն եօթ օրինակ առակաները, որ մարգարէները կը յայտնեն Բանին մարմնանալու մասին:

Նախ՝ որ Մովսէս այրող մորենին տեսաւ, ոչ չէր այրեր: Արդ՝ մորենին կը խորհրդանշէր Կոյսին մարմինը, կրակը՝ Աստուածութիւնը: Եւ ինչպէս մորենին չայրեցաւ, նմանապէս Մարիամի կուսութիւնը չեղծուեցաւ, այսպէս Բանը մարմին եղաւ, եւ Աստուածութեան հուրը չկիզեց Ադամին մարմինը կամ բնութիւնը: Իսկ կօշիկները արձակելը կը խորհրդանշէր մարդիկը, թէ պէտք չէ մահացու մեղքերով Աստուծոյ մօտենալ, աստուածային Սուրբ Խորհուրդին, քանի որ շատեր մօտեցան ու այրեցան Աստուածութեան հուրէն, ինչպէս հերձուածողները, որոնք հին [ուխտին] մէջ յայտնի դարձան, ինչպէս Ահարոնի որդիները եւ ուրիշ շատեր:

Երկրորդ՝ Մովսէսին ըսաւ. «Տասներկու գաւազաններ առ»²⁶. նահապետներէն իւրաքանչիւրին անունը իւրաքանչիւր գաւազանի վրայ գրեց: Արդ՝ գաւազանը, որու վրայ Ղեւիի անունը գրուած էր, ծաղկեցաւ, որ ցոյց կու տար Ահարոնի ցեղին քահանայութեան արժանաւորութիւնը: Իսկ արդ՝ հոգեւորապէս գաւազանը կը խորհրդանշէ Կոյս Մարիամը, իսկ ծաղիկը՝ զՔրիստոս: Իսկ անոնք որոնք ճշմարտապէս կը հաւատան Քրիստոսին՝ Աստուած եւ մարդ, մէկ բնութիւն, իսկ Մարիամին՝ Կոյս եւ մայր Աստուծոյ, անոնք արժանաւորապէս զՔրիստոս պիտի ժառանգեն:

Երրորդ՝ Գեղէնի բուրդը, որ ցօղով լեցուեցաւ [թրշեցաւ], իսկ կալը չոր մնաց²⁷: Արդ՝ բուրդը Մարիամը կը խորհրդանշէր, իսկ ցօղը՝ մարմնացած Բանն Աստուածը, իսկ կալը՝ Կոյսին մարմինը, որ աշխարհի ցանկութիւններէն չոր մնաց:

Դարձեալ՝ Արիստոտէլ կ'ըսէ, թէ՝ «օղին մէջ երեք բան հաւասար են իրարու, անոնց մէջէն ցօղը կը ծնի», որ կը նշանակէ Բանին մարդանալը եւ ոչ թէ Հօր եւ Հոգիին:

Դարձեալ՝ Եկեղեցւոյ վարդապետները կ'ըսեն, [թէ] երեք պատճառով ցօղը դժուարութեամբ կը ծնի: Նախ՝ ձմեռային եղանակի խստութեանէն: Երկրորդ՝ ամառուան տաքցած եղանակին: Երրորդ՝ փոթորիկի եւ

²⁶ [Տէս Թւ. Ժէ.]:

²⁷ [Տէս Դատ. 2. 36–38]:

բքաբեր եղանակին: Եւ ցօղը միայն կը ծնի՝ չորս տարրերու հաւասարութենէն, որ կը խորհրդանշէ, ձմեռը՝ նախանձոտ մարդը սատանայէն սառած, ամառը՝ պոռնկութեան դեւէն շերմացած, փոթորիկն ու բքաւորը՝ հպարտ եւ ամբարտաւան մարդը: Արդ, որովհետեւ այս երեք տեսակի մարդոց վրայ Կեանքի ցօղը՝ Սուրբ Հոգին շիջնէր: Իսկ սուրբ Կոյսը, այս բոլորէն զերծ ըլլալով, այդ պատճառով ընդունեց Կենաց ցօղը՝ մարմնացած Բանն Աստուածը:

Դարձեալ՝ գիշերը երկինքէն ցօղ շիջնէր, այլ՝ առաւօտեան, որովհետեւ գիշերը կը խորհրդանշէ Հին օրէնքը, իսկ առաւօտը՝ Նորը, քանի որ Կենաց անձրեւը ցամքած բնութեան վրայ իջաւ:

Դարձեալ՝ առաւօտը գիշերի աւարտն է եւ ցերեկուան սկիզբը, այսպէս Սուրբ Կոյսը կատարումն ու աւարտն է Հին օրէնքին եւ Նորին սկիզբն է:

Չորրորդ՝ առակաւոր օրինակի նշանը, որ Եզեկիա Արքային տրուեցաւ արեգակին միջոցով [կարդա՛ Դ. Թագ. Ի 1–11]: Արդ՝ թագաւորին հիւանդութիւնը [մարդկային] բնութեան հիւանդանալը կը խորհրդանշէ: Եւ դարձեալ՝ արեգակը՝ Աստուած Բանին [մարդկային] բնութեան գալը, իսկ տասը ժամով՝ հրեշտակներուն եւ մարդոց դասերը, իննը ժամը՝ հրեշտակներուն ինն դասերը, իսկ մէկը՝ մարդոց: Արդ՝ ինչպէս արեգակը, ինն ժամերը կոխելով ու անցնելով տասներորդ ժամուն, նոյնպէս ալ իմանալի արեգակը՝ Քրիստոս, հրեշտակներու ինն դասակարգութիւններէն անցնելով ու իջնելով մարդկայինի մօտ, ինչպէս Դաւիթը կ'ըսէ. «Հրեշտակներէն քիչ մը ցած դիրք զայն»²⁸: Եւ ինչպէս վերջաւորութեան արեգակը իջաւ, նոյնպէս Քրիստոս իջաւ Սուրբ Կոյսին մէջ. տակաւին, Աստուած կարող է մէկ ժամուան մէջ արեգակը տասը աստիճան ետ դարձնել, սակայն չըրաւ: Նոյնպէս կարող էր բազմաթիւ մարդիկ արարել մէկ ժամուան մէջ, ինչպէս հրեշտակները արարեց, եւ չգար ու մարմին չառնէր, այլ՝ իր անճառելի խոնարհութիւնը ցուցնելով, ատոր համար «Բանը մարմին եղաւ [եւ մեր մէջ բնակեցաւ]»:

Հինգերորդ՝ առակի օրինակով ներկայացուած արեւելեան դուռը, որ Եզեկիէլ Մարգարէն տեսաւ. «Ուրկէ ոչ ոք պիտի մտնէ կամ ելլէ, բացի Իսրայէլի Տէր Աստուծմէն»²⁹, որով դուռը կը խորհրդանշէ Սուրբ Կոյսը, իսկ արեւելքէն ելած լոյսը՝ զՔրիստոս:

²⁸ Սաղմ. Ը. 6:

²⁹ Եզեկ. ԽԴ. 1–3:

Դարձեալ՝ դռան փակուելիլ կը խորհրդանշէ Մարիամին կուսութիւնը, որմէ ոչ ոք մտաւ կամ ելաւ, բացի Իսրայէլի Աստուծմէն:

Դարձեալ՝ արեւելքը պայծառ, պտղաբեր եւ յարատեւ է, նոյնպէս Կոյս Մարիամը մաքուր եւ պարզ, զՔրիստոս պտղաբերող, եւ կապուեցաւ Աստուծոյ Արքայութեան հետ:

Դարձեալ՝ առաջին կոյսը՝ Եւան, որ նախ արեւելեան դուռ էր եւ յետոյ արեւմտեան դուռ եղաւ, նմանապէս եւ Սուրբ Կոյսը, որ նախ արեւմուտքի դուռ էր եւ յետոյ արեւելքի դուռ եղաւ, որ է Քրիստոս, որ «մարմնացաւ եւ մեռ մէջ բնակեցաւ»:

Վեցերորդ՝ Նաբուգոդոնոսորի պատկերն ալ առակաւորապէս կ'օրինակուի, որու գլուխը՝ ոսկի, կուրծքը՝ արծաթ, մէջքը՝ պղինձ, իսկ սրունքները՝ երկաթ³⁰:

Արդ՝ այդ մեծ պատկերը կը խորհրդանշէ աշխարհի մեծամեծ թագաւորութիւններն ու կռապաշտութիւնը, իսկ վէմը՝ որ առանց ձեռքի ինկաւ, կը խորհրդանշէր զՔրիստոս, որ առանց սերմի ծնաւ եւ խորտակեց աշխարհի բոլոր կռապաշտութիւնները:

Եօթներորդ՝ առակը, որ Դանիէլ Մարգարէն տեսաւ եւ առիւծներու գութի կապանքներէն անցաւ: Եւ Ամբակում Մարգարէն՝ Դանիէլ Մարգարէին ճաշ տանելով: Արդ՝ Դանիէլ Մարգարէն կը խորհրդանշէ Ադամի բնութիւնը, իսկ Ամբակում Մարգարէն՝ զՔրիստոս, իսկ պատրաստուած ճաշը՝ Իր մարմինը, որ [մարդկային] բնութեան տուաւ: Արդ, Եօթը կնիքները չուծուեցան Հին Իսրայէլի մէջ, որովհետեւ անոնց երեսներուն վրայ քօղ նետուած էր: Բայց Նոր Իսրայէլի մէջ լուծուեցաւ Մարիամ Կոյսին միջոցաւ, որ Բանն Աստուածը ծնաւ, որ բնակեցաւ մեր մէջ եւ Հոգիին Եօթը շնորհքները տուաւ մեզի, ինչպէս նաեւ Եկեղեցւոյ Եօթը խորհուրդները եւ հաւատքի Եօթը զօրութիւնները:

Տարակուսողներուն երրորդ հարցումը, թէ ինչո՞ւ Հայրը եւ Հոգին մարմին չզգեցան, այլ՝ միայն Որդին:

Ասոր վարդապետները կը պատասխանեն ու կ'ըսեն, թէ՛ Հայրը եւ Հոգին ամենակարող են, նոյնպէս Որդին ալ ամենակարող կ'ըսուի: Արդ՝ չի պատշաճիր Հօր եւ Հոգիին մարմին առնել, այլ միայն Որդիին: Եւ ասիկա բազմաթիւ պատճառներով:

³⁰ Տէս Դան. Ժ.:

Նախ՝ է՛, քանի որ Բանին կը պատշաճի մարմին առնել, համաձայն Պօղոսի խօսքերուն, որ կ'ըսէ, թէ՛ «որ Անոր փառքի լոյսն է եւ բուն պատկերը»³¹: Իսկ գիրքը կ'ըսէ, թէ՛ «Աստուած մարդը Իր պատկերին համաձայն ըրաւ»³²: Արդ, եթէ Որդին Հօր պատկերն ու կերպարանքն է, եւ մարդը՝ Աստուծոյ պատկերն է, հետեւաբար Որդիին միայն կը պատշաճէր Իր կերպարանքը ազատել:

Երկրորդ՝ քանի որ միայն Որդիին պատշաճ էր, որ Աստուծոյ Որդի եւ Մարդու Որդի ըլլար, քանի որ պատշաճ չէր Հօր երբեմն Հայր եւ երբեմն Որդի ըլլալ, նոյնպէս Սուրբ Հոգիին, եւ ասիկա անձերու յատկութիւններուն շփոթում կ'ըլլար, այս պատճառով Որդին Որդի կ'ըլլայ, եւ Բանը՝ մարմին:

Երրորդ՝ քանի որ մարդը երրորդութիւն է, այն երրորդութեան օրինակով, այսինքն՝ միտք, բան [խօսք] եւ սէր: Արդ՝ միտքը Հայրը կը խորհրդանշէ, բանը [խօսքը]՝ Որդին, իսկ սէրը՝ Սուրբ Հոգին: Արդ, Բանն է, որ Հոգիին շունչին միջոցով մարդուն մէջ կերպաւորուեցաւ եւ ո՛չ թէ Հայրը, այդպէս ալ Բանն Աստուածը մարմինի միջոցով մարդոց երեւցաւ եւ ո՛չ թէ Հայրն ու Հոգին:

Չորրորդ՝ որովհետեւ Արիստոտէլ կ'ըսէ, թէ՛ «առաջին պատճառները չորսն են, որոնք են հետեւեալները». նախ՝ նիւթական: Երկրորդ՝ կատարունական [նպատակային]: Երրորդ՝ ներգործական: Չորրորդ՝ վաղնջական: Արդ՝ առաջինը երկրորդին պատճառն է, երկրորդը՝ երրորդին, երրորդը՝ չորրորդին, ինչպէս արեգակին լոյսը առաջին պատճառն է միւս աստղերուն: Եւ առաջին շարժումը երկինքէն երկրորդին, երկրորդը՝ երրորդին, նմանապէս միւսներուն, նմանապէս միւս բոլորին: Այսպէս ալ Հայրը նախ պատճառ եւ առաջին շարժողն է Որդիին, ինչպէս կ'ըսէ Պօղոս, թէ՛ «ծունկի կու գամ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Հօր առջեւ, ուրկէ են բոլոր նուիրապետութիւնները՝ երկինքի մէջ եւ երկրի վրայ»³³, այս պատճառով Բանը մարմին եղաւ, որպէսզի Որդիին միջոցաւ բոլորը կերպարանաւորուելով միանանք Հօր եւ Սուրբ Հոգիին:

Հինգերորդ՝ քանի որ Որդին, որ Հօր եւ Սուրբ Հոգիին մէջ է, Անոր միայն կը պատշաճի գալ եւ միջնորդ ըլլալ՝ Հայր Աստուծոյ, Սուրբ Հոգիին եւ մարդոց միջեւ:

Վեցերորդ պատճառ՝ ինչպէս ճարտար խօսքը, երբ ասոր խօսքը ապա-

³¹ Եբր. Ա. 3:

³² Ծննդ. Ա. 26:

³³ [Տէս Եփես. Գ. 14–15]:

կանի, դարձեալ կը շինէ, կը կազմէ իր խօսքը, նոյնպէս Աստուած իմաստութեան խօսքով ամեն բան արարեց, ինչպէս Յովհաննէսը կը պատմէ ըսելով, թէ՛ «ամեն ինչ Անով եղաւ»³⁴, այդ պատճառով Բանը զրկուեցաւ եւ ոչ թէ Հայրը եւ Սուրբ Հոգին:

Եօթներորդ՝ քանի որ սատանան, որ [մարդկային] բնութիւնը խաբեց, ո՛չ կարողութեամբ եւ ո՛չ ալ զօրութեամբ, այլ՝ իմաստութեամբ, այդ պատճառով Բանն Աստուած ո՛չ կարողութեամբ եւ ո՛չ ալ զօրութեամբ կը փրկէ բնութիւնը, այլ՝ իմաստութեամբ եւ հեզութեամբ, ատոր համար Բանը մարմին եղաւ եւ ո՛չ թէ Հայրը եւ Սուրբ Հոգին:

Ութերորդ՝ որովհետեւ հրեշտակներն ու մարդիկը մեղք գործեցին. եւ հրեշտակներուն մեղքը՝ Աստուծոյ կարողութեան դէմ էր, իսկ մարդոց մեղքը՝ Աստուծոյ իմաստութեան, քանի որ սատանան առաջին մարդը խաբեց, ըսելով. «Ո՛չ թէ պիտի մեռնիք, այլ՝ ձեր աչիւրը պիտի բացուին»³⁵, այս պատճառով պատշաճ էր Հօր իմաստութեան, որ Քրիստոսն էր, մարմին զգենուլ եւ ո՛չ թէ Հօր եւ Հոգիին:

Իններորդ՝ Եկեղեցւոյ վարդապետները կ'ըսեն, թէ ինչպէս տունկերը պատուաստելը նոյն ծառէն պէտք է ըլլայ, որպէսզի աւելի գեղեցիկ ըլլայ, ինչպէս վայրի ձիթենին ընտանի ձիթենիով կը պատուաստեն եւ ո՛չ թէ վայրի թզենին խաղողի որթատունկի վրայ, ինչպէս կ'ըսէ Պօղոս, թէ՛ «դուն, որ վայրի ձիթենի էիր, եկար ու պատուաստուեցար բարի (ընտիր) ձիթենիի վրայ»³⁶, ինչքան առաւել նաեւ Ան, որ ընտանի ձիթենին էր, որովհետեւ ընտանի ծառերը բնութեամբ մէկ են՝ համով, հոտով եւ գոյնով: Արդ, [մարդկային] բնութիւնը անտառի մէջ վայրենի ծառ էր եւ անպտուղ, իսկ երբ Քրիստոս եկաւ եւ Կոյսէն ծնաւ, [մարդկային] բնութիւնը պտղաբեր ընտանի ծառ եղաւ, ինչպէս կ'ըսէ Պօղոս, թէ՛ «այն ատեն բոլորս բարկութեան որդիներ էինք, իսկ հիմա ողորմութեան որդիներ եղանք»³⁷:

Տասներորդ՝ ինչպէս Բանն Աստուած բնութեամբ Հօր Որդի է, այդպէս ալ մարդը արարչագործութեամբ Հօր որդի է, այդ պատճառով պէտք էր Որդիին անձը գար, Կոյսէն մարմնանար, ինչպէս կ'ըսէ Յակոբոս Առաքեալը, թէ՛ «հեռո՛ւ ձգեցէք ձեզմէ ամեն շարութիւն եւ աւելորդ բաներ, եւ հեզու-

³⁴ Յովհ. Ա. 3:

³⁵ Ծննդ. Գ. 4–5:

³⁶ Հմմտ. Հոտմ. ԺԱ. 17:

³⁷ Հմմտ. Ա. Պետր. Բ. 10:

թեամբ ընդունեցե՛ք Բանը, [որ կարողութիւն ունի ձեր հոգիները փրկել]»³⁸, որ է Քրիստոս, ատոր համար Բանը մարմին եղաւ եւ Կոյսէն մարմին զգեցաւ:

Արդ, ինչպէս ձիթենիի բնական ծառը ոստեր ունի, ընտանի պտուղ, եւ պտուղը որ կու տայ՝ իրեն յատուկ է, այդպէս ալ Բանն Աստուած, որ մեր մէջ բնակեցաւ եւ մեր բնութիւնը միացուց Իր աստուածային բնութեան՝ միացած եւ անշփոթ մնացած:

Այսքանը երրորդի մասին:

Տարակուսողներուն շորրորդ հարցումը, թէ հրեշտակներն ու մարդիկ կարողութիւն չունէին բնութիւնը փրկել:

Պատասխանելով կ'ըսենք, թէ ո՛չ մարդոցմէ եւ ո՛չ ալ հրեշտակներէն ռեւէ մէկը կարող է բնութիւնը ազատել, այլ՝ միայն Բանն Աստուածը, որ ամենակարող է:

Առաջին պատճառին պատասխանը այս է, թէ մարդոցմէ ո՛չ ոք կրնար ազատել բնութիւնը, քանի որ իւրաքանչիւր մարդ պարտական էր կամ սկզբնական մեղքին համար, կամ ալ ներգործական մեղքին համար: Արդ, իւրաքանչիւր բարիք, որ մարդիկ կը գործէին, հատուցում կու տային ներգործական մեղքերու եւ չէին կրնար իրենց պարտքերը վճարել, այլ՝ օր օրի կ'աւելնային. այդ պատճառով Բանը մարմին եղաւ, եւ մեր ներգործական մեղքերուն համար դեղ եւ հատուցում տուաւ Ապաշխարութեան Խորհուրդը: Դարձեալ, մարդիկ չէին կրնար վճարել սկզբնական պարտքերը՝ հայրերուն մեղքերը, ինչպէս Եզեկիէլ Մարգարէն կ'ըսէ, թէ՛ «հայրերը ազոխ կերան եւ որդիներուն ակոսները առին»³⁹, այդ պատճառով Բանը մարմին եղաւ եւ մեզի դեղ տուաւ՝ սկզբնական մեղքերու հատուցումը՝ Մկրտութեան Խորհուրդը:

Երկրորդ պատճառ՝ որովհետեւ հրեշտակները չեն կրնար [մարդկային] բնութիւնը փրկել, քանի որ բոլոր բարութիւնները, որ հրեշտակները ունին, իրենց սեփականութիւնը չեն, այլ՝ Աստուծմէ են, ատոր համար հրեշտակները չէին կրնար մեր պարտքերը հատուցել, եւ այդ պատճառով Բանը մարմին եղաւ, որպէսզի ժողովուրդը իրաւամբ փրկէ, ինչպէս կ'ըսէ Դաւիթ⁴⁰:

³⁸ Յակ. Ա. 21:

³⁹ Երեմ. ԼԱ. 29 [Բնագիրին մէջ Եզեկիէլ Մարգարէ նշուած է, որ կը կարծենք ընդօրինակութեան սխալմունք եղած է, որովհետեւ այս համարը Երեմիայի մարգարէութեան մէջ է]:

⁴⁰ Հմմտ. Սաղմ. ՃԺ. 9:

Երրորդ՝ քանի որ աւելի դժուար է [մարդկային] բնութիւնը փրկել, քան թէ նոր ստեղծել՝ առաջինին նման, ինչպէս կ'ըսուի Յուդայի համար, թէ՛ «աւելի լաւ էր, որ այդ մարդը ստեղծուած չըլլար»⁴¹, որովհետեւ ստեղծելը շատ աւելի դիւրին է, քան մեղքերէ ազատելը (փրկելը), ինչպէս մարդ մը, որ չի կրնար ստեղծել, նաեւ չի կրնար փրկել, եւ հրեշտակները որոնք չեն կրնար ստեղծել, այդպէս ալ չեն կրնար փրկել. տակաւին, ինչպէս մարդ մը, որ փոքր բան մը չի կրնար ներգործել, նաեւ մեծ բան մըն ալ երբեք չի կրնար ընել, հետեւաբար, ստեղծելը փոքր է քան մեղքերէ փրկելը, ատոր համար Բանն Աստուած, որ առաջին մարդը ստեղծեց, Անոր միայն կարելի էր մեղքերէն փրկել առաջին մարդը:

Չորրորդ՝ որովհետեւ Աւետարանը կ'ըսէ, թէ՛ «յարուրթեան ժամանակ մարդիկը հրեշտակներուն հաւասար պիտի ըլլան»⁴²: Արդ, եթէ հրեշտակները կրնային [մարդկային] բնութիւնը փրկել, հետեւաբար յարութեան ժամանակ հրեշտակներուն պիտի չհաւասարինք, քանի որ անոնց պարտական կ'ըլլայինք այդ ատեն, բայց երբ Բանը մարմին եղաւ եւ փրկեց մեզ, այդ պատճառով յարութեան ժամանակ պիտի հաւասարինք հրեշտակներու փառքին ու պարտական պիտի ըլլանք միայն Աստուծոյ Բանին:

Հինգերորդ՝ որովհետեւ բոլոր մարդիկ մեղքերու պատճառով ինկան, քանի մէկ Ադամէ եւ մէկ անձէ մը գոյացան բոլոր ժողովուրդները, այդ պատճառով մէկ անձի պատշաճ էր փրկել [մարդկային] բնութիւնը, որ է Քրիստոս, եւ ոչ բազմաթիւ անձեր, որոնք են հրեշտակները, ատոր համար «Բանը մարմին եղաւ եւ [մեր մէջ] բնակեցաւ»:

Վեցերորդ՝ միայն Աստուած [մարդկային] բնութիւնը ստեղծեց եւ ո՛չ թէ հրեշտակները: Արդ, եթէ հրեշտակները մեր բնութիւնը ունենային, այդ ատեն մեր սէրը անոնց նկատմամբ կ'ըլլար եւ ո՛չ թէ Աստուծոյ, եւ հրեշտակներուն պարտական կ'ըլլային եւ ոչ թէ Աստուծոյ: Արդ, միայն Աստուծոյ վայել էր փրկել [մարդկային] բնութիւնը, որպէսզի միայն զինք սիրենք ու միայն Աստուծոյ պարտապան ըլլանք:

Եօթներորդ՝ քանի որ Մովսէս կը գրէ, թէ՛ «ոեւէ մէկը պարտէրու հատուցման համար թող ծախէ իր հայրենի ժառանգութիւնը՝ իր ազգականներէն մէկուն եւ ծախուածին գինը ընտանիքի անդամներուն թող տայ, աւելին՝ ծա-

⁴¹ Տէս Մատթ. ԻԶ. 24:

⁴² Ղուկ. Ի. 36:

խուածին գինը թող թափէ բայց օտարին չտայ»⁴³: Արդ, այսպէս ալ դրախտը մեր հայրենի ժառանգութիւնն էր: Սակայն, մեր աղքատութեան պատճառով՝ մեղքերուն ծախեցինք զայն, իսկ Քրիստոս՝ մեր Եղբայրը եղաւ եւ իր արիւնով գնեց ժառանգութեան դրախտը եւ տուաւ իր եղբայրներուն: Ասոր համար Բանը մարմին եղաւ եւ ո՛չ թէ հրեշտակները:

Ութերորդ՝ որովհետեւ պատշաճ էր որ [մարդկային] բնութիւնը երկու ձեւով փրկուէր՝ կարողութեամբ եւ պարտապան ըլլալով: Արդ, Քրիստոս ամենակարող էր, քանի որ Աստուած էր եւ պարտապան էր՝ որովհետեւ Ադամի Որդի էր, եւ իւրաքանչիւր որդի պարտական է իր պարտքերը վճարել իր հօր:

Արդ, Քրիստոս Ադամի Որդի եղաւ, փարթամ եւ հարուստ, եւ վճարեց Ադամի սկզբնական մեղքի պարտքը՝ Մկրտութեան Խորհուրդին միջոցով: Որովհետեւ, եթէ ամենակարող չէր, պարտական չէր, քանի որ չէր կրնար Ադամի Որդի ըլլալ: Եւ արդ, որովհետեւ Քրիստոս Ադամին պարտքերը լուծեց իր շարձարանքներուն միջոցով, ինչպէս պատժապարտ մը, քանի որ իր շարձարանքներուն միջոցով կը մաքրէ ու կը փրկէ, եւ կամ ինչպէս երկու մարդիկ որոնք ցեխի մէջ իյնալով՝ միւսին մօտենալով եւ ազատելով զայն, ասոր համար Ադամը կը պարծենայ, ըսելով. «Աճառասիկ, որդիս, որ զիս ցեխէն հանեց»⁴⁴, ինչպէս Դաւիթը Ադամին համար կ'ըսէ, թէ՛ «զիս տառապանմեռու գուրէն հանեց»⁴⁵: Արդ, հրեշտակները չէին կրնար [մարդկային] բնութիւնը փրկել, քանի որ ամենակարող չէին, իսկ եթէ ամենակարող չէին, չէին կրնար Ադամի որդի ըլլալ, իսկ եթէ Ադամի որդի չէին կրնար ըլլալ, հետեւաբար չէին կրնար պարտքը վճարել, ասոր համար «Բանը մարմին եղաւ»:

Իններորդ՝ որովհետեւ հրեշտակները եթէ փրկէին մեզ, մեզի համար պաշտելի կ'ըլլային, քանի որ արժանի է մեր փրկիչը պաշտելը: Իսկ արդ, եթէ հրեշտակները պաշտէինք, կռապաշտ կ'ըլլայինք, եւ ի՞նչ օգուտ կար կռապաշտութենէ. կռապաշտութեան փոխել [մարդկային] բնութիւնը. ասոր համար «Բանը մարմին եղաւ», որպէսզի երբ պաշտենք զինք, աստուածապաշտներ ըլլանք:

Տասներորդ՝ որովհետեւ ոչ ոք այդքան համբերութիւն կրնայ ստանալ,

⁴³ Տէն Թիւք ԼԶ. 1–13:

⁴⁴ Հմմտ. Սաղմ. ԼԹ. 3:

⁴⁵ Սաղմ. ԼԹ. 3:

ինչպէս Աստուծոյ Որդին. ո՛չ հրեշտակները եւ ո՛չ ալ մարդիկ, քանի որ շեն կրնար. իսկ Աստուծոյ Որդին համբերութեամբ վճարեց սատանային պատերազմը եւ արդարութեամբ փրկեց, ու մեզի օրէնք տուաւ. «Ձեր համբերութեամբ պիտի շահիք [փրկեք] ձեր հոգիները»⁴⁶:

Տարակուսողներուն հինգերորդ հարցումը, թէ՛ կարելի էր Որդիին մարմին առնել, առանց Հօր եւ Հոգիին:

Նախ՝ ինչպէս իմացականի, կամքի եւ տեսողականի զօրութիւնը, որոնք հոգիին մէջ էութեամբ միեւնոյնն են, բայց միայն տեսողականը կը կցորդուի մարմինին, առանց իմացականին ու կամքին, նոյնպէս Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, թէեւ բնութեամբ միեւնոյնն են, բայց Որդին միայն կրնայ կցորդուիլ մարմինին հետ առանց Հօր եւ Սուրբ Հոգիին:

Երկրորդ վկայութիւն՝ ինչպէս խնձորէն տեսանելի է, որ երեք զօրութիւն ունի, այսինքն՝ գոյն, որակութիւն եւ համ ու հոտ: Գոյնը միայն կը կցորդուի աչքի տեսողութեան, առանց համին ու հոտին: Իսկ հոտը՝ քիթին, առանց համին ու գոյնին, այսպէս ալ Որդին միայն կը կցորդուի եւ մարմին կ'առնէ առանց Հօր եւ Սուրբ Հոգիին:

Երրորդ վկայութիւն՝ որովհետեւ ինչպէս սեռը, որ թէ՛ մարդը, թէ՛ ձին եւ թէ՛ առիւծը սեռով մէկ են՝ կենդանութեամբ, բայց ըստ տեսակի կը տարբերին զանազանութեամբ: Քանի որ մարդը կրնայ բանական ըլլալ, առանց ձիուն ու առիւծին, նոյնպէս ալ առիւծն ու ձին կրնան անբան ըլլալ՝ առանց մարդուն, այսպէս ալ Որդին կրնայ մարմին առնել, առանց Հօր եւ Սուրբ Հոգիին, ատոր համար «Բանը մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ»:

Դարձեալ, երկրորդ տեսակը, որովհետեւ անհատը կը տարբերի ընդհանուրէն: Քանի որ ըստ տեսակի կցորդութեամբ, բազմաթիւ մարդիկ կրնան մէկ յատկութիւն ունենալ, իսկ անհատը՝ ոչ: Ատոր համար օրինակ բերելով Պղատոնին ու Սոկրատին անհատ կ'ըսեմ: Արդ, Սոկրատին անձը կրնայ շարժարանքներ կրել առանց Պղատոնի, այդպէս ալ Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին, թէեւ բնութեամբ մէկ են, սակայն կրնայ Որդիին անձը մարմին առնել առանց Հօր եւ Սուրբ Հոգիին, ատոր համար «Բանը մարմին եղաւ»:

Դարձեալ՝ այն պատճառով կ'ըսէ Աւետարանիչը, թէ՛ «Բանը մարմին եղաւ»⁴⁷, որովհետեւ Աստուծոյ Բանն ու մարդուն խօսքը բազմաթիւ հար-

⁴⁶ Ղուկ. ԻԱ. 19:

⁴⁷ Յովհ. Ա. 3:

կաւորութիւններ եւ տարբերութիւններ ունին, իսկ հաւասարութիւններն ալ ասոնք են.

Նախ եւ առաջին՝ քանի որ ինչպէս մեր բնական խօսքը մեր միտքին մէջ կը ծնի առանց մարմինի, այդպէս ալ Բանն Աստուածը Հօրմէն կը ծնի առանց մօր:

Երկրորդ հաւասարութիւնը, թէ ինչպէս մեր բնական խօսքը երբ մեր մէջ կը ծնի, չի բաժնուիր մեր միտքէն եւ ո՛չ ալ կը նուազի, այդպէս ալ Բանն Աստուած, Հօրմէն ծնելով առանց մօր՝ անժամանակ եւ անվայրկեան, ո՛չ կ'անշատուի Հօրմէն եւ ո՛չ ալ կը նուազի, ինչպէս լոյսը արեգակէն՝ թէեւ աշխարհը կը լուսաւորէ, սակայն անկէ չի բաժնուիր:

Երրորդ հաւասարութիւնը, որովհետեւ ինչպէս մեր խօսքը, որ մեր մէջ կը ծնի, չենք անգիտանար զայն, այդպէս ալ Բանն Աստուած երբ Հօրմէն անժամանակ ծնաւ, Հայրը գիտէր զԱյն, ինչպէս Աւետարանը կ'ըսէ, թէ «ոչ ոք գիտէ Ռոդին, բացի Հօրմէն»⁴⁸:

Չորրորդ՝ քանի որ երբ տակաւին մեր խօսքը ծածուկ կ'երեւի, ոչ ոք գիտէ զայն, բացի միտքէն: Իսկ երբ յայտնենք զայն մեր լեզուին եւ լեզուակին (մակալեզու) միջոցով, այդ ատեն լսողներուն յայտնի կը դառնայ, այդպէս ալ Բանն Աստուած երբ ծածուկ էր Հօր ծոցին մէջ, ոչ ոք գիտէր զի՞նք, բացի Հօրմէն, իսկ երբ Կոյսէն ծնաւ, ապա բոլորին յայտնի եղաւ:

Հինգերորդ՝ քանի որ մինչ տակաւին խօսքը չէ ծնած մեր միտքերուն մէջ, չի ներգործեր, այլ՝ անգործ է դուրսին համար, այդպէս ալ Բանն Աստուած աշխարհի փրկութեան համար ոչինչ կը ներգործէր, եթէ ծնած չըլլար Սուրբ Կոյսէն:

Վեցերորդ՝ որովհետեւ ինչպէս մեր խօսքը երկակի է, այդպէս ալ Բանն Աստուած կրկին տեսութիւն ունի: Նախ՝ Հօրմէն անկերպ, երկրորդ՝ մօրմէն կերպով:

Եօթներորդ՝ քանի որ ինչպէս մեր բնական խօսքը, անշափելի ու անսահման է, այդպէս ալ Բանն Աստուած, որ Հօր ծոցին մէջ է, անշափելի է ու անսահման:

Ութերորդ՝ որովհետեւ ինչպէս մեր խօսքը կը ծածկուի եւ բայ ու վանկ կը զգենու, սակայն իր բնութեանէն չի փոխուիր, այդպէս ալ Բանն Աստուած թէեւ մարմինով ծածկուեցաւ, սակայն Հօր բնութեանէն չփոխուեցաւ:

Իններորդ՝ քանի որ ինչպէս զգայութիւնները չեն հասնիր մեր անմար-

⁴⁸ Դուկ. Ժ. 22:

մին խօսքին, նոյնպէս անմարմին Բանն Աստուծոյ [մարդկային] միտքը չի հասնիր:

Տասներորդ` որովհետեւ ինչպէս մեր խօսքը միտքէն կը ծնի, բայց միտքը չի ծնիր, այդպէս ալ Բանն Աստուած Հօրմէն կը ծնի, բայց Հայրը չի ծնիր:

Տասնմէկերորդ` քանի որ ինչպէս մեր խօսքը անսկիզբ ու անպատճառ չէ [այլ իրեն պատճառ ունի միտքը], նոյնպէս Բանն Աստուած է, որ ունի սկիզբ եւ պատճառ` Հայրը:

Տասներկրորդ` որովհետեւ ինչպէս մեր խօսքը անխախտ կերպով կը ծնի միտքէն, ինչպէս լոյսը արեգակէն, այդպէս ալ Բանն Աստուած Հօր անխախտ ծնունդն է:

Տասներեքերորդ` քանի որ ինչպէս մեր խօսքը ինչ որ կը տեսնէ մեր միտքին մէջ այն կը ցուցնէ, այդպէս ալ Բանն Աստուած ամեն ինչ որ Հօրմէն լսեց, մեզի իմացուց:

Տասնչորրորդ` որովհետեւ ինչպէս մեր միտքն ու խօսքը բնութեամբ եւ էութեամբ կը միանան, սակայն յատկութեամբ կը տարբերին, այդպէս ալ Բանն Աստուածն ու Հայրը բնութեամբ մէկ են, բայց անձնաւորութեամբ տարբեր:

Տասնհինգերորդ` քանի որ ինչպէս մենք կրնանք առանց բարբառելու թուղթի վրայ գրել, այդպէս ալ Բանն Աստուածը առանց այր մարդու գրուեցաւ Կոյսին արգանդին մէջ:

Տասնվեցերորդ` որովհետեւ ինչպէս մեր խօսքը նախ թուղթի վրայ կը գրենք եւ ապա զայն ոեւէ մէկուն կ'ուսուցանենք, այդպէս ալ Բանն Աստուած նախ Կոյսէն մարմին առաւ եւ ապա մեր մէջ բնակեցաւ:

Տասնեօթներորդ` քանի որ ինչպէս մեր խօսքը զգայական շունչին միջոցով լսելի կ'ըլլայ լսողներու ականջներուն, այդպէս ալ Բանն Աստուած Հոգիին միջոցով լսելի եղաւ Կոյսին ականջին:

Տասնութերորդ` որովհետեւ ինչպէս մեր խօսքը զգայական շունչին միջոցով իմաստուն եւ գիտուն կ'ընէ մարդիկը, այդպէս ալ Բանն Աստուած Սուրբ Հոգիին միջոցով իմաստուն եւ խորագէտ ըրաւ առաքեալները:

Տասնիններորդ` քանի որ ինչպէս մեր խօսքը միջնորդ է միտքին ու մարդուն միջեւ, այդպէս ալ Բանն Աստուած միջնորդ է Հօր եւ մարդոց միջեւ:

Քսաներորդ` որովհետեւ ինչպէս մեր խօսքով երբեմն միջնորդի մը միջոցով եւ երբեմն մըն ալ առանց միջնորդի կը խօսինք մարդոց հետ, այդպէս ալ Բանն Աստուած երբեմն մարգարէներուն միջոցով խօսեցաւ մարդոց հետ եւ երբեմն ալ դէմ յանդիման` մարմինով:

Արդ, ասոնք Բանն Աստուծոյ եւ մեր հաւասարութիւններն են, ատոր համար կ'ըսէ. «Բանը մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ»:

Իսկ տարբերութիւնները այսպիսին են.

Նախ՝ տարբերութիւնը անով է, որ Բանն Աստուածը գոյացութիւն է, իսկ մարդունը՝ պատահմամբ:

Երկրորդ՝ քանի որ Բանն Աստուածը Աստուած է, իսկ մարդուն խօսքը մարդ չէ:

Երրորդ՝ որովհետեւ Բանն Աստուածը անփոփոխելի է, իսկ մարդոց խօսքերը՝ փոփոխելի:

Չորրորդ՝ Աստուծոյ Բանը դատարկ տեղ չիջներ, այլ՝ անձրեւի նման երկիրը կ'արբուցանէ:

Հինգերորդ՝ քանի որ Աստուծոյ Բանը անսկիզբ է եւ անվախճան, իսկ մարդունը՝ սկիզբ եւ ժամանակ ունի:

Վեցերորդ՝ որովհետեւ Աստուծոյ Բանը մէկ է եւ ոչ թէ բազմաթիւ, իսկ մարդուն [խօսքը]՝ բազմաթիւ է եւ ոչ թէ մէկ:

Եօթներորդ՝ քանի որ Աստուծոյ Բանը կարող է եւ կատարեալ, իսկ մարդունը՝ անկատար եւ ոչ կատարեալ, ինչպէս ահաւասիկ կը տեսնենք նախնի իմաստասէրները շատ քիչ բաներու գիտակ էին, իսկ յետոյ եկողները՝ բազմաթիւ ուսմունքներու եւ շատ բաներու գիտակ դարձան, եւ խօսքին արուեստներն ու հնարքները օր օրի կ'աւելցնեն:

Ութերորդ՝ որովհետեւ Աստուծոյ Բանը միշտ եւ հանապազ ճիշդ է, իսկ մարդուն խօսքը երբեմն ճիշդ է եւ երբեմն ալ սուտ:

Իններորդ՝ քանի որ Աստուծոյ Բանը կարող է, որովհետեւ ինչ որ կամենայ՝ կ'ընէ, իսկ մարդուն խօսքը կարող չէ, քանի որ ինչ որ կամենայ՝ չի կրնար ընել:

Տասներորդ՝ որովհետեւ Աստուծոյ Բանը անցնդելի է եւ անայլայլելի, իսկ մարդուն խօսքը՝ փոփոխելի ու այլայլելի:

Տասնմէկերորդ՝ քանի որ մարդուն խօսքը խառն է ու բաղադրեալ, իսկ Աստուծոյ Բանը՝ պարզ եւ անբաղադրելի:

Տասներկրորդ՝ որովհետեւ Աստուծոյ Բանը տեսակներ չունի եւ արտաբերականի ու ներտրամադրեալի չի՛ բաժնուիր, իսկ մարդուն խօսքը տեսակներ ունի եւ կը բաժնուի արտաբերական եւ ներտրամադրեալ խօսքի:

Տասներեքերորդ՝ քանի որ մարդուն խօսքը մարդուն որդին չէ, բայց Աստուծոյ Բանը Աստուծոյ Որդին է:

Տասնչորրորդ՝ որովհետեւ Աստուծոյ Բանը ոչ սեռ ունի եւ ոչ տեսակ, իսկ մարդուն խօսքը թէ՛ սեռ եւ թէ՛ տեսակ ունի եւ կը բաժնուի ներտրամադրեալի ու արտաբերականի:

Տասնհինգերորդ՝ քանի որ Աստուծոյ Բանը սահմանի տակ չիյնար, որովհետեւ չիյնար սեռի եւ բաղկացուցիչ տարբերութիւններու տակ, իսկ մարդուն խօսքը սահմանով կը չափուի եւ ուրիշ բազմաթիւ տարբերութիւններ ու հասարակութիւններ ունի. բայց այսքանը շատ ըսի:

Դարձեալ. «Բանը մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ»:

Բազմաթիւ պատճառներով:

Հաւատքի, յոյսի եւ սիրոյ համար, որպէսզի մեր մէջ հաւատքը հաստատուէր, յոյսը զօրանար եւ սէրը ջերմանար, ինչպէս արուեստագէտ մը, եթէ իր լարն ու քանոնը ուղիղ ըլլան, իր բոլոր գործերը ուղիղ են, իսկ եթէ ծռու են, անոր բոլոր գործերը սխալ են. այդպէս ալ բոլոր բանական էակները՝ հրեշտակներն ու մարդիկը: Որովհետեւ անոնց բնութիւնը կրնայ մեղքի մէջ իյնալ, բացի Աստուծոյ Բանէն, որ մարդ եղաւ, այդ պատճառով քրիստոնեաներուն հաւատքը հաստատուեցաւ, ընդարձակ տաճար եղաւ երբ «Բանը մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ», քանի որ քրիստոնեաներուն քանոնը այլեւս չի ծռիր ու աշխարհի իշխանը Անոր՝ [Քրիստոսի] մէջ ոչ մէկ [մեղք] կը գտնէ:

Դարձեալ՝ մեր յոյսը զօրացաւ Աստուծոյ Բանին մարմնանալով, որովհետեւ մերն է յոյսը Աստուծոյ փառքին հասնելու, իսկ մարդուն փառքը՝ Աստուծոյ երեսը տեսնելն է: Արդ, Աստուածութիւնը բարձր ըլլալով, իսկ մեր խօսքը ստեղծուած ու կապուած ըլլալով մարմինին, մեր բանականութեամբ շատ հեռու ենք Աստուծոյ էութենէն, այդ պատճառով մարդիկ անյոյս էին աստուածային յոյսէն, քանի որ չէին կրնար Աստուծոյ էութեան հասնիլ, այսինքն՝ Որդիին բնութեան՝ մարդու բնութեան միանալով, ասոր համար «Բանը մարմին եղաւ», երբ մեր յոյսը զօրացաւ եւ հաստատուեցաւ Աստուծոյ մէջ:

Դարձեալ՝ մեր սէրը առ Աստուած ջերմացաւ Բանին մեր մօտ իջնելով: Արդ՝ երեք կերպով որեւէ մէկ իր դէպի իրեն կը քաշէ ուրիշ իր, ինչպէս են ասոնք. սէր, ջերմութիւն, դատարկութիւն: Արդ՝ սէրը այսպէս կը քաշէ միւսները դէպի իրեն, ինչպէս յայտնի է կենդանիներէն, ինչպէս կ'ըսէ Սողոմոնը, թէ՛ «Իւրաքանչիւր կենդանի [ապրող] իր նմանը կը սիրէ»⁴⁹, ինչ-

⁴⁹ Հմմտ. Առակ. ԺԳ. 19–20:

պէս են ձուկերը՝ ծովուն մէջ, թռչունները՝ օդին մէջ, եւ անասունները՝ երկրի երեսին: Արդ, այս պատճառով «Բանը մարմին եղաւ», որպէսզի նմանի մեզի եւ առաւել սիրէ մեզ:

Դարձեալ՝ Արիստոտէլ կ'ըսէ, թէ՛ «բոլոր համատեսակները պարտաւոր են նմանիլ ու հաւասարիլ իրարու, ինչպէս աղբատները՝ աղբատներուն, եւ հարուստները՝ հարուստներուն»: Արդ, մեր բնութիւնը աղքատ ըլլալով, իր Հօր հարստութիւնն ու Աստուածութիւնը վատնելով՝ հարուստ եւ փարթամ չէինք կրնար հասնիլ Անոր, այդ պատճառով «Բանը մարմին եղաւ», եւ հարուստը՝ աղքատացաւ, որպէսզի իրարու հաւասարինք եւ առաւել սիրենք զինք եւ ծառաներուն յատուկ երկիրդով չերկնչինք Իրմէ: Իսկ ջերմութիւնները, ինչպէս արեգակին հուրն ու ջերմութիւնը եւ կամ ինչպէս շիջած մոմը, դարձեալ վերստին կը վառի ծուխէն: Արդ՝ այդպէս ալ Աստուածութեան հուրը ջերմացուց մեր բնութիւնը եւ ինչպէս շիջած մոմը՝ դարձեալ կը վառէ Հոգիին շնորհքները: Իսկ դատարկութիւնը, ինչպէս դատարկուած անօթ մը, դէպի իրեն կը քաշէ իրը, այդպէս ալ չարիքներու պատճառով բարիի շնորհքներէն դատարկուած բնութիւնը, Աստուծոյ Բանին մարմնանալով դարձեալ լեցուեցանք՝ եօթնարփեան շնորհքներուն տուչութեամբ:

Դարձեալ՝ «Բանը մարմին եղաւ», Իր առաջին գեղեցկութիւնը ճանչնալու համար, քանի որ վարդապետները կ'ըսեն, թէ՛ այնպէս գեղեցիկ էր բնութիւնը [մարդկային], հրեշտակներու գեղեցկութեան նման, բայց իր գեղեցկութիւնը չճանչցաւ, այլ՝ պաշտեց բոլոր արարածները. ոմանք՝ երկիրը [հողը], ոմանք՝ երկինքը, կէսը՝ աստղերը, ուրիշները՝ կրակը, ոմանք՝ օդն ու ջուրը. բայց Արիստոտէլ կ'ըսէ, թէ՛ «Երկինքը չպաշտեցին», որովհետեւ մարդը միւս տարրերէն կազմուած է, այդ պատճառով Բանը թանձր մարմինը առաւ եւ գերիվեր ըրաւ քան տարրերը, լուսեղէնները եւ հրեշտակներուն դասերը, որպէսզի ճանչնան իր գեղեցկութիւնը, ինչպէս կ'ըսէ Երգ Երգոցին մէջ, թէ՛ «ո՛վ գեղեցիկդ կիներուն մէջ, չճանչցան քեզ»⁵⁰: Արդ, երբ ճանչցաւ, արարածները չպաշտեց, այլ՝ Արարիչը պաշտեց:

Դարձեալ՝ «Բանը մարմին եղաւ» որպէսզի [մարդկային] բնութիւնը Աստուածութեան մօտեցնէ, ինչպէս ըսին Յուդայի ցեղերը ըստ Իսրայէլի տասնմէկ ցեղերուն, թէ՛ «մենք արֆային մօտիկ ենք»⁵¹: Արդ, մենք հրեշտակներէն աւելի մօտիկ ենք Աստուծոյ, քանի որ հրեշտակները մօտիկ են

⁵⁰ Տէս Երգ Ե. 9, 17:

⁵¹ Բ Թագ. ԺԹ. 42:

Աստուծոյ Հօր կողմէ՝ արարչագործութեամբ, իսկ մեր բնութիւնը մօտիկ է Աստուծոյ Հօր կողմէ եւ մօր կողմէ:

Դարձեալ՝ Յովսէփ կրկնակի բաժին տուաւ Բենիամինին ու անոր մօր, իսկ միւս եղբայրներուն մէկ բաժին, քանի որ Յովսէփն ու Բենիամինը նոյն մօրմէն եւ նոյն հօրմէն էին, իսկ միւս եղբայրները միայն հօր կողմէ եղբայր էին: Այդպէս ալ Աստուած, երբ ժառանգութիւնը բաժնէ, մեզի կրկնակի բաժին պիտի տայ իսկ հրեշտակներուն մէկ, քանի որ միայն Հօրմէ են, եւ ոչ թէ մօրմէ:

Դարձեալ՝ լաւ է տալ եւ առնել, քան միայն տալ ու շահնել, ինչպէս Յովնաթանն ու Դաւիթը, որոնք իրարու հագուստները կը հագնին՝ սիրոյ պատճառով, այդպէս ալ Քրիստոս բազմաթիւ հրեշտակներու փառք տուաւ, եւ ոչ թէ անոնցմէ առաւ, իսկ մեզի Իր պատկերը տուաւ եւ մեր բնութիւնը առաւ:

Դարձեալ՝ երեք կերպով ազգակցութիւն կ'ըսուի. նախ՝ մարմնաւոր եւ արեան ազգակցութիւն: Երկրորդ՝ հոգեւոր ազգակցութիւն: Երրորդ՝ օրինաւոր ազգակցութիւն, որ է որդեգրութիւն: Արդ, մենք այդ երեք ազգակցութիւնները ունինք Քրիստոսի հետ, իսկ հրեշտակները՝ մէկը, այսինքն՝ որդեգրութեանը: Անոնք արարչութեամբ որդիներ են եւ ոչ թէ բնութեամբ, իսկ մենք երեք ազգակցութիւններն ալ ունինք: Որդեգրութիւնը ունինք արարչագործութեամբ՝ հրեշտակներուն հետ: Հոգեւորը՝ Աւագանէն ծնելով՝ հոգիէն ու ջուրէն, այդպէս ալ Քրիստոս մօրմէն օրինաւորը առաւ Կոյսի արիւնէն, իսկ Կոյսը մեր քոյրն է եւ Ադամի աղջիկը:

Արդ, այս ազգակցութեան համար եւ մեր՝ Աստուծոյ մօտիկ ըլլալնուս համար՝ «Բանը մարմին եղաւ եւ մեր մէջ բնակեցաւ»:

Գրաբարէ արեւմտահայերէնի վերածեց
ՎԱՐԱՆԴ (ՅԱԿՈՒԲ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆ

